ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՀԿ)

ՄԻՋԵՎ

ք. Երևան **13 հուլիսի 2022 թ.**

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Հայաստանի Ազգային Սկաուտական Շարժում» ՀԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը,

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ,

Կարևորելով հաշմանդամային սպորտի, սոցիալական տուրիզմի, մարզական միջոցառումների լուսաբանման, երիտասարդների սպորտային, կրթական միջոցառումներում մասնակցության ակտիվության աստիճանի բարձրացումը ,

Ընդունելով Ինստիտուտի և Կազմակերպության պատրաստակամությունը համատեղ համագործակցության համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները,

Որոշեցին կնքել սույն Հուշագիրը հետևյալի մասին՝

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Սույն Հուշագրով Ինստիտուտը և Կազմակերպությունը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ինստիտուտը և Կազմակերպությունը պատրաստակամ են պարբերաբար տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք թույլ կտան զարգացնել սպորտը և դրա տարածվածությունը երիտասարդության շրջանում.

2.2 Սույն Հուշագրով Ինստիտուտը և Կազմակերպությունը համագործակցում են նաև՝

2.2.1 Մարզական, կրթական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում փոխադարձ աջակցության միջոցով,

2.2.2 Համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների, հաշմանդամային սպորտի, սոցիալական տուրիզմի, կամավորական աշխատանքների, մարզական միջոցառումների լուսաբանման, համատեղ ճամբարների կազմակերպման միջոցով,

2.2.3 Ինստիտուտի և Կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.2.4 Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Ինստիտուտի և Կազմակերպության գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարզաբազաների, գույքի օգտագործման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման միջոցով,

2.2.5 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով,

2.2.6 Ներդրումային, նորարարական, անվանական կրթաթոշակների, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.2.7 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի իրականացման շուրջ:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Ինստիտուտը և Կազմակերպությունը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2022թ. հուլիսի 13–ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5" ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինստիտուտ	**Կազմակերպություն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Հայաստանի ազգային սկաուտական շարժում» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Երվանդ Քոչարի 17/6
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Ատենապետ՝ Սանդրա Վարդանյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.